

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 526
ՎԱՅԵԼՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 18:— **Պրակները՝** հինգ, զանազան չափերի, Ա—3, Բ—5, Գ և Դ—4, Ե—2:— **Մեծությունը՝** 27.5×42×0.7 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թղ.ղթ:— **Կազմը՝** ստվարաթուղթ, ծածկված կապույտ լիտերինով, որի երկու կողմերի չորս անկյուններում ճնշումով զարդեր են նկարված: Կոնակը մ արծաթագույն մի ծաղկեփունջ կա ճնշումով:— **Պահպանակները՝** սկզբում կա բարակ սպիտակ մի թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթերը՝** ամբողջ գրությունը թերթի մեկ երեսին է: Բոլոր թերթերի կոնակը դատարկ է:— **Տողերը՝** փոփոխական:— **Գծումները՝** չկա:— **Գիրը՝** զանազան տեսակի:— **Զարդագրությունը՝** կան բազմաթիվ զարդագրեր (թթ. 8ա—10ա, 12ա—18ա), որոնցից ամենասիրունը թ. 17-ինն է: Բացի այդ ձեռագրում կան հետևյալ նկարները՝ Ներսիսյան վարժարանը (թ. 1ա), հրեշտակ և արծիվ (2ա), ութանիստ աստղ մեջը խաչով (3ա), թագ, բուրգ և երկու հրեշտակ (4ա), գրչով մի անձ (11ա), թագ (13ա), շրջանակ մեջը նժար և երկու ճյուղ (15ա), աստղ և ճառագայթներ (16ա), արեգակ, թռչուններ, ճյուղեր, ծաղիկներ և այլն (17ա), Հիսուս (18ա):— **Գրիչը** և **ծաղկողը՝** Սողոմոն Աբամելիքյանց:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1860 թ.:— **Վայրը՝** Թիֆլիս:— **Ծանոթագրությունն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 Մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սույն ձեռագիրը հայկական գեղագրության շատ արժեքավոր մի ձեռնարկ է, պատրաստված Սողոմոն Աբամելիքյանցի կողմից, որ շատ հավանաբար Թիֆլիսի Ներսիսյան վարժարանում վայելչագրության ուսուցիչ է հանդիսացել 1860-ական թվականներին):

Թ. 4ա.— Մեսրոպեան Նշանագիրք.
Բոլորագիր:
Թ. 5ա.— Օրինակ Գոթացի բոլորագրաց.
Օրինակ Գոթացի գլխագրաց:
Թ. 6ա.— Գոթացի զարթագիր:
Թ. 10ա.— Նոտր գիր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Վայելչագրութիւն
Հայոց
Ս. Աբամելիքեանց.
Ներսիսեան Հայոց Ուսո.մնարան:
Ի Տփխիս
1860.
Թ. 2ա.— Հայկական
Գեղագրուի
Գ. Ի. (կապգիր) Զ,
Ս. Աբամելիքեանց
Ի Տփխիս:
Թ. 3ա.— Ազնուազարմ Ասպետին քաջանվայլ
Պարոն
Յովհաննիսի
Լազարեան Ղայթմազե(ա)նց
Ի Ցուէր սիրոյ և մեծարանաց
Ընծայէ ի Տփխիս
Ուսումնարան
Ներսիսեան
Գր. ի. ձ. Ս. Աբամելիք(եանց):

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի № № Ա—Գ-ից:

Թ. 4ա.— Գր(եալ) ի(ւր) ձեռամբ
Սողոմոն Աբամելիքեանց:

(Նույնը կրկնվում է հետևյալ էջերում՝ 5ա, 6ա, 8ա, 9ա, 10ա, 11ա, 12ա, 13ա, 14ա, 15ա, 16ա և 18ա):

Թ. 17ա.— Գրեալ իւր ձեռամբ Սողոմոն Աբամելիքեանց:

Թ. 8ա.— Կնքել գրիչ (նույնը՝ թ. 11ա:)

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կազմի երեսին տպված է ճնշումով)
Նորին Վեհափառութեան
Ամենայն Հայոց Կաթողիկոս
Տ. Տ. Գէորգ V-ին.
12 Հոկտեմբերի 1913 թ.
Գրիգոր Ա. Քահ. Գրիգորեանից, Բագու:

№ 527
ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 2:— **Պրակները՝** 1, երկու թերթից բաղ՝ կացած:— **Մեծությունը՝** 49×26.7×1.4 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն հաստ դիմացկուն թուղթ:— **Կազմը՝** սրճագույն լիտերինով ծածկված տախտակ:— **Պահպանակները՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ—2բ:— **Տողերը՝** 13:— **Գծումները՝** մատիտով քաշված:— **Գիրը՝** երկաթագիր:— **Զարդագրություն՝** ձեռագրի վերևում կա գեղեցիկ մի զարդանկար, երկու թռչուն, ծաղիկներ, սկիհ, խաչ և գավազան, ինչպես նաև մի հատ մեծ զարդագիր «Ա»: Օգտագործված են կարմիր, կանաչ, ոսկեգույն, դեղին և կապույտ գույները: Վերևում կենտրոնը ոսկեգույնով գրված են երկու տառ՝ ՄԲ, իրարու վրա անցած: Սրանք նշանակում են «Մատթէոս Բ» ամենայն հայոց կաթողիկոսը, որին ուղղված է սույն գեղեցիկ ուղերձը իր գահակալության առթիվ:— **Գրիչը** և **ծաղկողը՝** Գարեգին Լևոնյան:— **Պատվիրատուն՝** Թիֆլիսի հայ մտավորականությունը:— **Ժամանակը՝** 14 հունիսի 1909 թ.:— **Վայրը՝** Թիֆլիս:— **Մանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 Մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ձեռագիր ուղերձը հղված է Մատթեոս Բ. ամենայն հայոց կաթողիկոսին՝ Թիֆլիսի հայ մտավորականության կողմից: Ստորև տրվում է բուն տեքստը և ստորագրությունները):

Թ. 1ա.— Վեհափառ Տէր,

Ազգային գրական ասպարիզում գործողներս եկել ենք շնորհաւորելու Ձեր Սրբութեան բարի գալուստը և մեր ուրախութիւնը միացնելու ժողովուրդի բոլոր խաւերի շնորհակալութեանը:

Ուրախ ենք, որ արժանի եղանք տեսնելու բաց հովիտ, որի սիրելի ան(ո)ւան հետ են կապ(ո)ւած ազգի ն(ո)ւիրական բաղձանքները:

Թող Տէրը երկարացնէ ազգընտիր Հով(ո)ւապետիդ կեանքը և հնարաւորութիւն տայ ի կատար ածելու Ձեր իղձերը Ազգիդ և եկեղեցուդ շինութեան և պայծառութեան համար:

Ղազարոս Աղայեան
Գ. Բարխուտարեան
Ա. Բաբախանեան (Լէօ)
Իսահակ Յարութիւնեան
Գաբրիէլ Սունդուկեան
Սեդրաք Մանդինեան
Ա. Քալանթարեան
Հ. Առաքելեան
Մեսրոպ Վարդապետ
Եղնիկ աւագ քահ. Երզնկեանց
Ն. Յարոյ
Յովհ. Թումանեան
Յովհաննէս ա. թ. Միրաքեան
Գիւտ ա. քահ. Ալանեանց
Ս. Նապետեան
Յակոբ Մանանդեան
Նիկողայոս Տէր-Վանդեան
Լ. Դանիէլեան
Ե. Լալայեանց
Յարութիւն Թումանեան
Յ. Վ. Գ(ր)իգէնթէկեան
Աղէքսանդր Քիշմիշեան
Խ. Բաբայեան
Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեան
Արսախանեան
Յ. քահանայ Ճուղուրեան
Սարուխան
Նար-Դոս
Մ. Աւետիսեան
Սահրատ Սէթ
Յակ. Աղաբաեան
Աստ. Երիցեան
Գարեգին Նենգիարեան
Մակար Ղմշկեան
Մ. Պետրոսեան
Մեսրոպ ա. թ. Մելեան
Պետրոս Սիմէոնեան
Գէորգ Միրաքեան
Յ. Գասպարեանց (Արտէմիուպ)
Բժ. Բ. Աղասարեան
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
Ս. Քամալեանց
(նաև 2—3 անընթեռնելի անուններ):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Մ Բ (Մատթէոս Բ—կապգրերով):
Գ(արեգին) Լևոնեան:
1909 14/VI. Թիֆլիս

(Շարունակելի)